



## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ***Կայուն զարգացմանն առնչվող՝ Լիդիան ընկերության պարտավորությունը***

Լիդիան Բնօրինակը՝ և իր վերահսկվող դուստր ձեռնարկությունները («Ընկերություն» կամ «Լիդիան») ձգտում են կայուն զարգացման<sup>1</sup> արդյունքների և պարտավորվում ծրագրերի զարգացման և շահագործման բոլոր փուլերում և ընթացակարգերում ներառել բնապահպանական, առողջության, անվտանգության և սոցիալական խնդիրները:

Որպես այդ հանձնառության մաս, Լիդիանը մշակել է սոցիալական, բնապահպանական, աշխատանքի առողջության և անվտանգության, ինչպես նաև մարդկային ռեսուրսների քաղաքականություններ:

### ***Ընկերության Սոցիալական Քաղաքականությունը***

Ընկերությունը ընդունում և գիտակցում է սոցիալական խնդիրների պատշաճ կառավարումը որպես ընկերության բարձրագույն առաջնահերթություն և պարտավորվում է կայուն հարաբերություններ հաստատել շահագրգիռ կողմերի, մասնավորապես ծրագրի տեղամասի հարակից համայնքների հետ: Ընկերությունը ձգտում է այնպիսի հարաբերությունների, որոնք հիմնված են փոխադարձ հարգանքի և փոխըմբռնման, ակտիվ համագործակցության և երկարաժամկետ հանձնառությունների վրա:

Իր գործունեության ընթացքում Ընկերությունն իրականացնում է սոցիալական կառավարման ծրագիր՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել և մեղմել ծրագրի գործողության հետևանքով առաջացած ցանկացած բացասական սոցիալական ազդեցություն, իսկ որտեղ հնարավոր է՝ մեծացնել դրական սոցիալական ազդեցությունները՝ միջազգայնորեն ճանաչված բիզնեսի լավագույն փորձին համապատասխան: Սոցիալական քաղաքականության և ընկերության համապատասխան սոցիալական ընթացակարգերի իրականացումը առանցքային պահանջ է ծրագրի զարգացման բոլոր փուլերում:

### ***Համապատասխանություն***

Ընկերությունն իր գործունեությունը կիրականացնի սոցիալական խնդիրներին առնչվող՝ Հայաստանում կիրառվող օրենսդրության համաձայն: Ընկերությունը նաև հետևում է Միջազգային ֆինանսական կորպորացիայի և Զարգացման և Վերակառուցման Եվրոպական Բանկի չափանիշներին և ուղեցույցներին:

Լիդիանը պահանջում է իր խորհրդատուներին, կապալառուներին և մատակարարներին որպես նվազագույն չափանիշ հավատարիմ լինել այս սոցիալական քաղաքականության սկզբունքներին:

### ***Շարունակական բարելավում***

Ընկերությունը պարբերաբար կվերանայի իր սոցիալական քաղաքականությունը և անհրաժեշտության դեպքում այն կթարմացվի: Ընկերությունը պարբերաբար կթարմացնի կամ կբարելավի նաև իր բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության կառավարման համակարգը՝ պարբերական, համակարգված, ներքին աուդիտի միջոցով: Այն կօգտագործի աուդիտի արդյունքները որպես հիմք՝ ավելի ձկուն կառավարման գործընթացի միջոցով սոցիալական գործունեության շարունակական բարելավման համար:

<sup>1</sup> «Գործընթաց, որտեղ հաշվի են առնվում ներկայիս պահանջները՝ չգրկելով գալիք սերունդներին իրենց պահանջները բավարարելու հնարավորությունից:»

## ***Շահագրգիռ կողմերի ներգրավում***

Լիդիանը հասկանում է, որ հարաբերությունների լավ կառավարումը կարևոր է բիզնեսի հաջողության և ծրագրի կառավարման համար: Ընկերությունը նաև հասկանում է, որ ծրագրի յուրաքանչյուր փուլում հնարավոր են բացասական ազդեցություններ՝ հաղորդակցության և շահագրգիռ կողմերի ներգրավվածության բացակայության պատճառով:

Ընկերությունը գիտակցում է, որ գործում է տարբեր մշակույթների, ապրելակերպի և ժառանգության միջավայրում, և այդպիսով կառավարում է շահագրգիռ կողմերի հետ հարաբերությունները՝ հիմնվելով հարգանքի, թափանցիկ և բաց հաղորդակցության վրա: Ընկերության գործունեությունը պահանջում է մշակել ծրագրին համապատասխան և կոնկրետ Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան՝ ապահովելով հստակ քաղաքականություն և ընթացակարգեր շահագրգիռ կողմերի ներգրավման համար, որը կկիրառվի ծրագրի ընթացքում: Սա ներառում է բնապահպանական և սոցիալական տեղեկություններ տրամադրելու և Ընկերության բողոքարկման մեխանիզմի մանրամասները:

## ***Մշակութային ժառանգություն***

Ընկերությունը մշակութային ժառանգությունը կկառավարի՝ համապատասխան համայնքների և ազգային մշակութային ժառանգության մասնագետների հետ խորհրդակցելով: Ընկերությունը փորձում է խուսափել կամ նվազագույնի հասցնել մշակութային ժառանգության վրա որևէ շոշափելի կամ ոչ շոշափելի ազդեցությունը: Որտեղ բացասական ազդեցություններից խուսափելը հնարավոր չէ, Ընկերությունը իր գործունեության ընթացքում պահանջում է աշխատել իրավասու մասնագետների հետ՝ որպեսզի վերջիններս օգնեն հայտնաբերել և պահպանել մշակութային ժառանգությունը: Համապատասխան համաձայնության առկայության դեպքում Լիդիանը խթանում է մշակութային ժառանգության վերաբերյալ տեղեկությունների հավաքման, վերլուծության և տեղեկատվության տարածման գործընթացներին՝ ցուցաբերելով բաց ու թափանցիկ մոտեցում:

## ***Մարդու իրավունքներ***

Լիդիանն աջակցում է մարդու իրավունքների պաշտպանությանը՝ ՄԱԿ - ի Մարդու իրավունքների հռչակագրին համապատասխան: Ընկերությունը ակնկալում է, որ իր գործառնությունները կարտացոլեն ՄԱԿ - ի բիզնեսի և մարդու իրավունքների վերաբերյալ հիմնարար սկզբունքները՝ հիմնվելով մարդու իրավունքների իրավաբանական փորձաքննության վրա:

Ընկերության անվտանգության ընթացակարգերը համապատասխանում են այս պարտավորությանը և պահանջում են անվտանգության և մարդու իրավունքների վերաբերյալ կամավոր սկզբունքների ընդունումը բոլոր գործողությունների ժամանակ:

## ***Համայնքային զարգացում***

Ծրագրի գործունեությունից առաջացող օգուտը առավելագույնի հասցնելու նպատակով՝ Ընկերությունը նաև փորձում է աջակցել համայնքային ծրագրերի, որոնք կարող են կայուն փոփոխությունների հանգեցնել համայնքներում՝ առանց Ընկերությունից կախվածություն ստեղծելու:

Ընկերությունը տարբերակում է կամավոր համայնքային զարգացման ծրագրերը և մեղմացմանն ուղղված պարտադիր միջոցառումները, որոնք անհրաժեշտ են նվազեցնելու բիզնեսի գործողություններին առնչվող բացասական ազդեցությունները:

Սույն քաղաքականությունը Տնօրենների խորհրդի կողմից հաստատվել է 2016թ. օգոստոսի 17-ին: